<< ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ >> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

« ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ »

ԾՐԱԳԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա << Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում >>

ԴԱՍՏԻԱՐԱԿ՝ ՆՈՒՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

« Աշոցքի մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ_____ էջ 2 - 4

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ _ էջ 5

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ_ էջ 6 –7

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ_ էջ 8 – 10

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ_____ էջ 11- 12

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ_ էջ13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ_____ էջ 14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ_____էջ 15

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում»

«Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում» թեման արդիական է նրանով, որ հաշվի առնելով ուսուցանվողների տարիքային առանձնահատկությունները, ինտեգրված պարապմունքների կազմակերպումը ուսումնադաստիարակչական աշխատանքը դարձնում են ճկուն, հասանելի բոլորին, ազատ՝ ֆիքսված և կարծրացած, ավանդական անշուք մեթոդներից ու անսահման հետաքրքիր խաղերով հարուստ աշխատանքներ։

Ինտեգրված պարապմունքների առարկայական ընտրության հիմքերն են ինտեգրված պարապմունքների առարկայական ընտրության՝ ըստ տարիքային խմբերի մակարդակի, և ինտեգրված պարապմունքների առարկայական թեմատիկ բաշխման գործառույթը ։

«Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում» թեմայի նպատակն է ուսուցումը ավելի մատչելի, հասկանալի և հետաքրքիր դարձնելու, ամրապնդելու և հիմք ստեղծելու կարողունակությունները զարգացնելու համար։ Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս զարգացնել բազմակողմանի մտածելու, կողմնորոշվելու ունակությունները ։ Բոլոր երեխաներն ունեն նույն կարողունակությունները միջին չափով, բայց հաճախ կորցնում են դրանք կյանքի առաջին տասնամյակում։ Մինչդեռ այս հատկությունները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթցում։ Մյուս կողմից աշխարհը միասնական է և երեխան այն ընկալում է որպես ամբողջական միասնություն։ ՈՒստի շրջապատող աշխարհին երեխային ծանոթացումը, հատկապես վաղ տարիքում, չի կարելի մասնատել այսպես կոչված «առրկաների» (մայրենի, մաթեմատիկա, բնագիտություն, երաժշտություն և այլն), դա կարող է աշխարհի մասին մասնատված պատկեր ստեղծել։ Այս խնդրի լավագույն լուծումը ինտեգրված ուսուցումն է, երբ իրեն շրջապատող աշխարհի որևէ կոնկրետ երևույթ երեխան ուսումնասիրում է միաժամանակ մի քանի տեսանկյունից (ուսումնսիրում է, հասկանում, հաշվում այն, փորձում ու փորձարկում, նկարում, ծեփում, խոսում և երգում դրա մասին, խաղարկում

դրա հետ կապված իրավիճակներ և այլն)։ Նշված նպատակին հասնելու արդյունավետ ուղիներից մեկը ուսումնառությունը ինտեգրված թեմատիկ դասերի միջոցով կազմակերպելն է։ Ժամանակակից տեխնոլոգիաներով հարուստ կենցաղը և ուսուցումը հետ է մղել երեխայի մեջ ինքուրույն մտածելու , գործելու , որշումներ կայացնելու , կառուցելու կարողունակությունները ։ Նախադպրոցական ուսուցման կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալը։

Ինտեգրված պարապմունքները, որպես խմբակային աշխատանքների հնարավորություն կամրապնդի ուսուցանվողների մեջ համատեղ աջակցման հմտություններ, վստահություն միմյանց հանդեպ և հոգատարություն շրջապատող միջավայրի նկատմամբ, արժեքային ձևավորման զարգացում ։

Ինտեգրված պարապմունքերի կազմակերպումը տարատարիք խմբերում ըստ զարգացման ոլորտների վերջնարդյունքների առաջ է բերում մի շարք դժվարություններ։

«Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում» թեման ընդգրկում է բոլոր հինգ զարգացման ոլորտների ուսուցման աշխատանքների կազմակերպման հիմքերը։ Մեր շրջապատող աշխարհը միասնական է ու ամբողջական, և երեխան այն ընկալում է հենց այդպես։ Ուստի ուսուցման առավել արդյունավետ տեսակը միավորված,ինտեգրված, ամբողջական մոտեցումն է։ Կրթության բովանդակության ընկալումը՝ որպես առանձին առարկաներից պատրաստի գիտելիքների, չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, աշխարհի մասին մասնատված, ոչ ամբողջական պատկերացում է տալիս։ Ահա թե ինչու հատկապես ուսուցման այս տարիքում երեխաների գիտելիքների,կարողությունների զարգացումը, երեխայի գործունեությունը պետք է կազմակերպել միասնական, միավորված ՝ ինտեգրված ծրագրով։

«Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում» թեմայի ամենափայլուն առավելությունը կայանում է նրանում, որ այն չունի ֆիքսված ծրագրային ուսումնական և մեթոդական ցանկ, քանի որ այն կազմակերպվում է ըստ տարիքային խմբերի մակարդակի ։ Թեմատիկ դասերը որևէ կոնկրետ թեմա, երևույթ ուսումնասիրելու ընթացքում կարևորում են

գործունեության այն ձևերը, որոնք պահանջուն են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում։ Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը և չի սահմանափակվում մեկ առանձին ոլորտով։ Շատ կարևոր է նաև հոգատար, աջակցող միջավայր ստեղծելը, քանի որ միայն այսպիսի միջավայրում են մեծանում բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջողություններ դրսևորող երեխաները։ Թեմատիկ պարապմունքների ժամանակ դաստիարակը գիտակցաբար այնպես է անում, որ երեխաները զգան մեծահասակների հոգատարությունը, շահագրգռվածությունը երեխաների ուսման հարցում։ Երեխաների սովորելու ընթացքում դաստիարակները և ծնողները զրուցում են նրանց հետ՝ ողջ ուշադրությունն ու էներգիան կենտրոնացնելով ուսման բովանդակության վրա։ Աստիճանաբար ավելի ծավալուն ու անկեղծ դարձող երկխոսությունների միջոցով նրանք զարգացնում են երեխաների մտածողությունը։ Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն է ներշնչում նոր ձեռք բերած գիտելիքները կիրառելու համար։ Թեմատիկ ուսուցումից բոլորն էլ շահում են։ Ծնողները ներգրավվում են կատարվող տարբեր աշխատանքների մեջ և տեղյակ են, թե ինչ են անում իրենց երեխաները։ Մանկավարժներին ոգևորում են պարապմունքների նոր բովանդակությունը և նոր մեթոդներ կիրառելու համար գրավիչ հնարավորությունները։ Երեխաներն, իրենց հերթին, դառնում են գիտակ, ինքնատիպ մտածողներ, որոնց թույլ է տրվում նոր ձևերով դրսևորել իրենց գիտելիքները։ Երբ այսպիսի համալիր ուսուցումը մանրակրկիտ պլանավորում և իրականացվում է, ապա արդյունքում երեխաները դրսևորում են հետևյալ հատկանիշները՝ հոգատար են միմյանց նկատմաբ, հետաքրքիր կապեր են ստեղծում, կատարելագործում են շփման և երկխոսության հմտությունները, ձևավորվում են որպես համայնքի անդամներ։

Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Ինտեգրված պարապմունքների առարկայական ընտրության հիմքերը

Թեմատիկ ուսուցումը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծում, ինտեգրում՝ մեկ հետաքրքիր նյութ ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են բովանդակային միավորներ ծրագրի տարբեր բաժիններից։ Ինտեգրված թեմատիկ ուսուցման ծրագիրն այնպես է կազմվում, որ երեխաները տեսնում և հասկանում են առարկայական ոլորտների միջև եղած կապերը և նրանց կապը կյանքի հետ։ Թեմատիկ ուսուցումը հնարավորություն է տալիս մանկավարժին ծրագիրը կազմակերպել երեխաներին հետաքրքրող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ։ Թեմատիկ ուսուցումը միջառարկայական է, ինչպիսին ինքը՝ կյանքն է։ Այս փաստը երեխաների համար անմիջապես նշանակալի է դառնում, երբ լուծելու համար նրանց է ներկայացվում մի «իսկական» խնդիր կամ ուսումնասիրության ենթական մի գաղափար։ ՈՒսումնասիրվող թեմայի կամ ծրագրի մեջ երեխայի հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելով՝ ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմաբ։ Թեմատիկ դասերի ծրագրման ժամանակ մանկավարժը պետք է հաշվի առնի հետևյալը. Արդյո՞ք թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին։ Ընտրված թեման նպաստու՞մ է երևակայության ու ստեղծագործական մտածողության խթանմանը։ Հնարավո՞ր է ընտրած թեման անցնել այնպես, որ ապահովվի բազմամակարդակ մասնակցությունը, և միաժամանակ յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքը կավարտվի հաջողությամբ։ Երեխաները հնարավորություն կունենա՞ն համագործակցելու և որոշակի պատասխանատվություն կրելու։ ։ Երեխաները հնարավորություն կունենա՞ն ավելացնելու իրենց գիտելիքները և փորձը առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ։ 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլ ընտրանքային մոդելներով։

1.1 Բաժին

Ինտեգրված պարապմունքների առարկայական ընտրության հիմքերը ըստ տարիքային խմբերի մակարդակի։

Ցանկացած ուսուցանվող թեմա, իրավիճակ և նյութ ուսուցանվողները ընկալում են անհատական յուրահատուկ ձևով ըստ կարողունակության, զարգացման և ինքնաճանաչության մակարդակի։

Կրթության և դաստիարակության պատասխանատվություն կրող կազմակերպությունները և անհատները պարտավոր են ուսուցանվողներին ծանոթացնել հնարավորին չափով իրականությանը համապատասխանող իրավիճակների և խնդիրների, ուղորդել նրանց այդ իրավիճակների և խնդիրների լուծումների տարբերակները ինքնուրույն հասկանալու և կիրառելու։

Ինտեգրված պարապմուունքների կազմակերպման համար առարկայական ընտրությունը կատարում ենք նաև հաշվի առնելով մանկավարժի մանկավարժահոգեբանական հմտությունները և ինտեգրված պարապմունքների կազմակերպման համար նյութերի և առարկաների համակապակցման բաշխման ունակությունները։

Ինտեգրված պարապմունքի ընթացքում պետք է ընդգրկել մի քանի զարգացման ոլորտներին համապատասխան աշխատանքներ և այն մատուցել համակարգված և համակապակցված։

- Պարապմունքը կարելի է ինտեգրել կերպարվեստի որևէ պարապմունքի հետ։
  Օրինակ. նկարչություն <<Աշխարհի ամենալավ հայրիկը>> :
- Կառուցողական աշխատանք՝ Թղթից, ստվարաթղթից և այլ նյութերից կառուցել <<Իմ տունը>>
- Այնուհետև երեխաներին պատմեցինք Ալվարդ Մովսիսյանի <<Սագիկի>> պատմությունը, և
  հանձնարարեցինք շարունակել պատմությունը։

Շարունակական կրթության գաղափարը կարող է իրականացվել ժամանակակից պայմաններում, եթե և՛ մանկապարտեզ և՛ հանրակրթությունը, կարողանան արդյունավետորեն լուծել կուտակված փորձը մատաղ սերնդին փոխանցելու խնդիրը.

սովորեցնել տեղեկատվության հետ աշխատելու մեթոդներ, նոր գիտելիքներ ստեղծելու մեթոդներ և ամենակարևորը , զարգացող աշխարհի մասին գիտելիքների անհրաժեշտ մակարդակի պահպանման մեթոդներ: Կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ, որոնք օգնում են հասնել ծրագրի վերջնարդյունքներին, նպաստելով երեխաների կոմպետենցիաների ձեռքբերմանը: Ինտեգրված պարապմունքի ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ: Ինտեգրված պարապմունքի դասավանդման մեթոդներն այն մեթոդներն են, որոնց օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ:

Դաստիարակների հիմնական դերը՝ իրենց գիտելիքներն ու տեղեկատվությունը երեխաներին փոխանցելն է: Այս մոդելի մեջ ուսուցումը և գնահատումը դիտվում են որպես երկու առանձին մասեր: Երեխայի ուսուցումը գնահատվում է ինչպես ֆորմալ՝ այնպես էլ ոչ ֆորմալ գնահատման ձևերով, ներառյալ՝ խմբային աշխատանքները, ուսանողական թղթապանակները, և դասի մասնակցությունը: Ուսուցումը և գնահատումը փոխկապակցված են, այսինքն ինտեգրված պարապմունքի դասավանդման գործընթացում երեխաների ուսուցումը շարունակաբար գնահատվում է դաստիարակների կողմից: Հաճախ օգտագործվող ուսուցողական մեթոդները կարող են ներառել դասի մասնակցություն, ցուցադրություն, ասմունք, մտապահում կամ այս բոլորի համադրությունը:

Ինտեգրված պարապմունքի ուսուցման մեթոդները բազմազան են: Ուսուցման մեթոդները որոշվում են ամենից առաջ մանկապարտեզի նպատակներով: Ուսուցման մեթոդների ընտրության ժամանակ չափազանց կարևոր նշանակություն ունի ուսումնական նյութի բովանդակությունը: Տարբեր գիտություններում կիրառվում են տարբեր հետազոտության մեթոդներ և դրանք որոշելու ժամանակ պետք է հաշվի առնել տարիքային խմբերի մակարդակը, շրջապատի հանգամանքներն ու մանկապարեզի կահավորման վիճակը: Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսումնառողները ձեռք են բերվում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով երեխաների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը: Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ:

1.2 Բաժին

Ինտեգրված պարապմունքների առարկայական ընտրության հիմքերը ըստ առարկայական թեմատիկ բաշխման

Թեմատիկ դասերը որևէ կոնկրետ թեմա, երևույթ ուսումնասիրելու ընթացքում կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջուն են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում: Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը և չի սահմանափակվում մեկ առանձին ոլորտով: Շատ կարևոր է նաև հոգատար, աջակցող միջավայր ստեղծելը, քանի որ միայն այսպիսի միջավայրում են մեծանում բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջողություններ դրսևորող երեխաները: Թեմատիկ պարապմունքների ժամանակ դաստիարակը գիտակցաբար այնպես է անում, որ երեխաները զգան մեծահասակների հոգատարությունը, շահագրգռվածությունը երեխաների ուսման հարցում: Երեխաների սովորելու ընթացքում դաստիարակները և ծնողները զրուցում են նրանց հետ՝ ողջ ուշադրությունն ու էներգիան կենտրոնացնելով ուսման բովանդակության վրա: Աստիճանաբար ավելի ծավալուն ու անկեղծ դարձող երկխոսությունների միջոցով նրանք զարգացնում են երեխաների մտածողությունը: Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն է ներշնչում նոր ձեռք բերած գիտելիքները կիրառելու համար: Թեմատիկ ուսուցումից բոլորն էլ շահում են: Ծնողները ներգրավվում են կատարվող տարբեր աշխատանքների մեջ և տեղյակ են, թե ինչ են անում իրենց երեխաները: Մանկավարժներին ոգևորում են պարապմունքների նոր բովանդակությունը և նոր մեթոդներ կիրառելու համար գրավիչ հնարավորությունները: Երեխաներն, իրենց հերթին, դառնում են գիտակ, ինքնատիպ մտածողներ, որոնց թույլ է տրվում նոր ձևերով դրսևորել իրենց գիտելիքները: Երբ այսպիսի համալիր ուսուցումը մանրակրկիտ պլանավորում և իրականացվում է, ապա արդյունքում երեխաները դրսևորում են հետևյալ հատկանիշները՝ հոգատար են միմյանց նկատմաբ, հետաքրքիր կապեր են ստեղծում, կատարելագործում են շփման և երկխոսության հմտությունները, ձևավորվում են որպես համայնքի անդամներ:

Քանի որ թեմաների բաշխումը կատարվում է ըստ ուսումնադաստիարակչական չափորոշչի և տարվա եղանակների, ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կատարվում է համապատասխան թեմաների ընտրությամբ՝ մեկը մյուսին լրացնող,ամրապնդող և շարունակող։Գոյություն ունի նաև ինտեգրված պարապմունքների կազմակերպումը ըստ թեմատիկ պլանավորման այլ տարբերակը։Եթե արդեն մշակված է ինտեգրված պարապմունքերի քաղաքականություն, ապա ուսումնական տարվա թեմատիկ բաշխումը կատարել ըստ ինտեգրված պարապմունքների մշակման ընթացքի։ՈՒսումնական կազմակերպության տնօրինությունը թեմաների համակապակցման ընտրությունը թողնում է մանկավարժին, քանի որ, աշխատանքային փորձից ելնելով և ուուցանվող խմբին ավելի ծանոթ լինելով մանկավարժը ավելի արդյունավետ կդարձնի աշխատանքը։ՈՒսումանկան տարվա ընթացքում թեմաները ամրապնդելու նպաակով կարող են կրկնվել նաև ուրիշ այլ համակապակցված տարբերակներով և չափով։

<u>ԹԵՄԱ <<ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ >></u>

<u>Մուսայելյանի տարատարիք խումբ /Աշոցքի մանկապարտեզի մասնաճյուղ/</u>

Ինտեգրված պարապմունք՝ խոսքի զարգացում, մաթեմատիկա, երաժշտություն , կառուցողական՝ապլիկացիա,

Նպատակը՝ բառապաշարի ակտիվացում և ընդլայնում՝ որջ, ծուռ թաթ, բրդոտ բառերով, մանր մոտորիկայի , ուշադրության , հիշողության զարգացում, կազմել պարզ նախադասություններ ։

<u>Զննական պարագաներ</u>՝ վայրի կենդանիների նկարներ , ձմեռային պատկերներ ,

<u>Կառուցողական նյութեր</u>՝ երկրաչափական պատկերներ,եռանկյուն, մեծ, փոքր և միջին չափերի շրջաններ, սոսինձ ։

<u>Պարապմունքի ընթացքը</u>՝ ունկնդրել արջուկ երգը /հեղինակ Ս. Պետրոսյան /, անցկացնել զրույց արջուկի մասին ,քննարկել հարցերի միջոցով ,

<u>Ֆիզկուլտդադար</u> ՝ քայլում ենք չորեքթաթ, քայլում ենք արջի ես , ձերքերը վեր, երեխաների հետ ծանոթանում ենք կառուցողական նյութերի հետ , բացատրում ենք աշխատանքի հաջորդական քայերը ,ընթացքում հետևել աշխատանքներին , օգնել դժվարացողներին,կառուցել արջուկին ,

<u>Վերջնարդյունք</u> ավարտին յուրաքանչյուրը պատմի իր կառուցած արջուկի մասին և արժանացնի գովասանքի։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Ինտեգրված պարապմունքների կազմակերպման հիմքերը տարիքային խմբերում

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է երեխաների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: Հաշվի առնելով այս չափանիշը ուսուցման մեթոդները դասակարգվում են՝ պասիվ, ակտիվ, ինտերակտիվ :

Ուսուցման պասիվ մեթոդներ- Դա երեխաների և դաստիարակների փոխգործունեության ձև է, որտեղ դաստիարակը հանդես է գալիս որպես հիմնական գործող և ուսումնական գործընթացի կառավարող, իսկ երեխաները հանդես են գալիս որպես պասիվ ունկնդիրներ: Դաստիարակի կապը երեխաների հետ իրականանում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի և այլ աշխատանքների միջոցով:

Ուսուցման ակտիվ մեթոդներ - Դա երեխաների և դաստիարակների համագործակցությունն է միմյանց հետ, երբ երեխաները ուսուցման գործընթացում հանդես են գալիս որպես ակտիվ մասնակիցներ: Այս ուսուցման մեթոդներն ապահովում են երեխաների արդյունավետ, ստեղծագործական գործունեությունը:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ - Համագործակցություն է զրույցի երկխոսության շրջանակներում, ի տարբերություն ակտիվ մեթոդների, ինտերակտիվ մեթոդները նպաստում են ուսանողների համագործակցությանը ոչ միայն դասախոսի, այլ նաև միմյանց հետ:Պասիվ մեթոդ՝ երեխայի և դաստիարակի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դաստիարակը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասսիվ լսողի դերում են և ենթարկվում են դաստիարակի հրահանգներին:Այսպիսով, ուսումնասիրելով ուսուցման մեթոդների էությունը, դիտարկելով մեթոդների հիմնական դասակարգումները և դասավանդման ամենաարդյունավետ մեթոդի ընտրության հետ կապված հարցերը, կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

1. Ուսուցումը որպես դաստիարակի և երեխայի փոխազդեցություն որոշվում է թե՛ հասարակության կողմից կուտակված, կրթության բովանդակության մեջ մարմնավորված սոցիալական փորձի երիտասարդ սերնդի կողմից յուրացում ապահովելու նպատակով, և թե՛ երեխաների հնարավորություններով:
2. Հետևաբար, դասավանդման մեթոդը որպես նպատակին հասնելու միջոց դաստիարակի հետևողական և կանոնավոր գործողությունների համակարգ է, որը որոշակի միջոցների օգնությամբ կազմակերպում է երեխաների գործնական և ճանաչողական գործունեությունը սոցիալական փորձի յուրացման համար, որի աղբյուրն է և կրթության բովանդակության կազմի անալոգը:

2.1 Բաժին

Ինտեգրված պարապմունքների կազմակերպման հիմքերը տարիքային խմբերում ըստ կարողունակությունների

Երեխայի կարողունակությունների անկում, սառեցում կամ զարգացում մենք դիտում ենք ըստ երեխայի դաստիարակման միջավայրի և ուսման պայմանների։Եթե վերցնենք որպես ուսումնասիրման հիմք ինը կարողունակությունները խմբավորենք ըստ զարգացման ոլորտների, կունենանք ինտեգրված պարապմունքների կազմակերպման պլան։ Կան կարողություններ, որոնք զարգացնում, ընդլայնվում են միայն վաղ մանկության տարիքում և այն փաստերը, որ մենք հիմա առնչվում ենք միջին, ավագ տարիքային միջակայքում՝ լինի դա վախ ,ամոթխածությունը, պասիվությունը, ինքնաժխտվածությունը, դրանք հետևանք են վաղ մանկությունում շրջապատող միջավայրի մասին թերի ծանոթություն ունենալու։ Բայց մենք աշխատում ենք տարիքային որոշակի սահմանների մեջ գտնվող խմբերի հետ, և մեր առջև դրված խնդիրներն են հասցնել այդ տարիքային խմբերի երեխաներին իրենց հետագա կյանքի գործունեության, զարգացման համար անհրաժեշտ կարողունակությունները հավասարաչափ զարգացման աստիճանին։ Խաղերի, երաժշտության, նկարչության, կառուցողական աշխատանքների, զբոսանքների և ուսումնասիրությունների միջոցով բացահայտենք, պարզենք, ճանաչենք երեխաների ընդունակությունները և հնարավորությունները։ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում գտնում ենք մեր բոլոր հարցերի պատասխանը : Ինտեգրված պարապմունքի նպատակն էր գնահատել և ճանաչել հայրենի բնաշխարհը, մասնակցել բերքահավաքին և չմոռանալ հիգենիայի կանոններին հետևելու անհրաժեշտությունը :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ուսուցման ժամանակակից մեթոդները՝ դրանք կիրառելով պարապմունքի ընթացքում:

Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում պահնջում է մեծ մասնագիտական ներդրում և համապատասխան աշխատանքային հմտություններ : Պահանջվում են սահմանել մեթոդը՝ որպես ուսումնադաստի - արակչական գործընթացում նպատակների իրագործման գործիք,ուսումնասիրել համալիր և ինտեգրման մեթոդի կիրառումը ,որպես նախադպրոցական ուսուցման իմացական և հուզական կարողունակությունների ձևավորման լավագույն միջոց,ինտեգրման մեթոդը կիրառել խաղերի, որպես երեխային գործնական գիտելիքներ հաղորդելու միջոց: ողջ հետազոտական աշխատանքի ընթացքում ,ուսումնասիրելով մասնագիտական գրականություն և կատարելով համապատասխան ուսումնասիրություն , եկանք այն եզրահանգման , որ ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում ուսումնական հաստատություններում լայնածավալ կիրառման դեպքում նման կլինի կրթության ոլորտի հեղափոխության : Ամփոփելով կատարված դիտարկումները, վերլուծությունները և տեսական ուսումնասիրությունը, որ այն կարող է արդյունավետ միջոց հանդիսանալ երեխայի կարողունակությունների զարգացման գործնթացում : Ներկայացրեցինք, թե ինչպես է խաղի ընթացքում խթանվում է երեխայի կողմից գիտելիք ստանալու, փորձելու, ստուգելու, համեմատելու, տրամաբանելու ցանկությունը:Խաղերի ստեղծման, ձևավորման առավել ընդհանուր օրինաչափությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս.Ա.ՄԱՐՈՒԹՅԱՆ ,Ա.Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ << Նախադպրոցական մանկավարժություն >> 2008թ., ք. ԵՐԵՎԱՆ:
2. ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ<<3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով>> ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2018 թ.-ի ք. Երևան հրատարակչություն :
3. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ , ԻՆՏԵԳՐՎԱԾ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ , ԿԱՐԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ, Լ. ՍՄԲԱՏՅԱՆ , 2015 թ.: